

# WASH

«Զրի, սանիտարահիգիենիկ պայմանների  
հասանելիության բարելավում»  
ուղեցույց Հայաստանի դպրոցների համար

# 1. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գրքույկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի և «Վորլդ Վիժն Հայաստան»-ի կողմից Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ և նպատակ ունի ապահովելու դպրոցներում առողջ, անվտանգ ու արժանապատիվ միջավայր՝ մաքուր ջրի ու սանիտարական հարմարությունների, ինչպես նաև հիգիենայի չափանիշների պահպանման միջոցով:

Ուսումնական հաստատություններում ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների հասանելիության բարելավումը կարևոր է երեխաների և ուսուցչական կազմի առողջության պահպանման և անվտանգ կրթական միջավայրի երաշխավորման համար: Հայաստանում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթական հաստատություններում դեռևս կան ջրամատակարարմանը, սանիտարական պայմաններին ու հիգիենային առնչվող լուրջ խնդիրներ: Այս խնդիրները բացասաբար են ազդում երեխաների առողջության, դպրոցական հաճախելիության և կրթական առաջադիմության վրա:

## Ուղեցույցի նպատակները



Կրթական հաստատություններին և համայնքներին տրամադրել գործնական խորհուրդներ և մեթոդներ՝ WASH-ի խնդիրների լուծման համար



Աջակցել Հայաստանի դպրոցներին ստեղծելու անվտանգ և առողջ միջավայր բոլոր երեխաների համար



Բարձրացնել դպրոցներում հիգիենայի ստանդարտները և նվազեցնել հիվանդությունների տարածումը

Ուղեցույցը նպատակ ունի օգնելու դպրոցներին՝ պահպանելու մաքուր, անվտանգ և ներառական պայմաններ, որտեղ յուրաքանչյուր երեխա կարող է սովորել և զարգանալ առողջ միջավայրում:

## 2. ՅՈՒՆԻՍԵՖ-Ի ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՅՈՒՆԻՍԵՖ-ի «ՀՀ դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում WASH-ի պայմանների համապարփակ ուսումնասիրությունն» ընդգրկել է Հայաստանի մի շարք դպրոցներ և մանկապարտեզներ՝ գնահատելու ջրի և սանիտարահիգիենիկ պայմանները կրթական հաստատություններում: Հետազոտությունը կատարվել է Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի շուրջ **350 դպրոցական ու նախադպրոցական հաստատություններում:**

Ուսումնասիրության հիմնական տվյալներն ընդգծում են հետևյալ խնդիրները:

**Խմելու ջրի հասանելիություն:** Հետազոտության արդյունքում պարզվել է, որ դպրոցների 25%-ը չունի խմելու համար անվտանգ ջուր: Բացի դրանից, 19%-ն ունի ջրամատակարարման ընդհատումներ, ինչը խանգարում է դպրոցներում հիգիենայի պահպանմանը:

**Սանիտարական պայմաններ:** Կա ներառական սանիտարական հարմարությունների պակաս, հատկապես հաշմանդամություն ունեցող աշակերտների և տարիքային տարբեր խմբերի կարիքների համար: Փոքր տարիքի երեխաների համար նախատեսված առանձին սանիտարական հարմարություններ չկան դպրոցների 60%-ում, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված պայմաններ չկան դպրոցների 86%-ում և նախադպրոցական հաստատությունների 87%-ում:

**Ջիգիենիկ պարագաների հասանելիություն:** Հաստատությունների միայն 77%-ում կա օճառ, և ընդամենը 21%-ն է տրամադրում ձեռքեր չորացնելու միջոցներ (օրինակ՝ թղթե անձեռոցիկներ կամ սրբիչներ): Սա նշանակում է, որ բազմաթիվ երեխաներ չունեն բավարար միջոցներ՝ դպրոցներում հիգիենիկ միջավայր պահպանելու համար:

**Պրահանություն և ջրահեռացման համակարգեր:** Շատ համայնքներում չկան ջրահեռացման և աղբահանության միասնական համակարգեր: Այս խնդիրները բացասաբար են ազդում երեխաների առողջության վրա և նպաստում, որ նրանք լիովին չգիտակցեն կրթական միջավայրում հիգիենայի պահպանման կարևորությունը:

Այս ուղեցույցը մշակվել է հենց այս խնդիրների լուծմանն օժանդակելու համար՝ դպրոցներում և համայնքներում բարձրացնելով WASH-ի չափանիշները և ապահովելով ավելի անվտանգ, առողջ և ներառական միջավայր:

### 3. WASH-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

WASH-ի պայմանների թերի առկայությունը կամ դրանց բացակայությունը դպրոցներում և համայնքներում առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, որոնք ազդում են ոչ միայն երեխաների առողջության, այլև նրանց կրթության վրա և որը անդրադառնում է համայնքի ընդհանուր վիճակին:

## Առողջապահական խնդիրներ

Դպրոցներում և համայնքներում ծագող առողջապահական խնդիրներ են մի շարք հիվանդություններ, որոնց կանդրադառնանք հաջորդիվ:

**Փորլուծություն և աղիքային վարակներ:** Աղտոտված ջրի կամ սննդի միջոցով հեշտությամբ տարածվող փորլուծությունը և աղիքային վարակները մեծ վտանգ են ներկայացնում հատկապես դպրոցներում, որտեղ երեխաները մշտապես շփվում են միմյանց հետ: Փորլուծությունը կարող է հանգեցնել ջրազրկման և ուժասպառության, ինչը բացասաբար է ազդում երեխաների ուշադրության և ուսումնական առաջադիմության վրա:


**Տիֆ:** Սա ևս աղտոտված ջրի միջոցով տարածվող վարակիչ հիվանդություն է: Տիֆը կարող է առաջացնել տենդ, փսխում և ընդհանուր թուլություն, ինչի պատճառով տուժած երեխաները չեն կարողանում հաճախել ուսումնական հաստատություն և տուժում են երկարատև առողջական խնդիրներից:

**Մաշկի և աչքերի վարակներ:** Անբավարար սանիտարական պայմաններն ու աղտոտված ջուրը կարող են հանգեցնել մաշկի և աչքերի վարակների, որոնք տարածվում են հատկապես երեխաների շրջանում, քանի որ նրանք շատ ավելի հաճախ են շփվում կեղտոտ մակերևույթների և ջրի հետ:

**Ջրային մակաբուծային վարակներ:** Մաքուր ջրի բացակայությունը կարող է հանգեցնել նաև մակաբուծային վարակների, օրինակ՝ շիստոսոմոզի, որը տարածվում է չմշակված կամ աղտոտված ջրի միջոցով:

Այս հիվանդությունները հաճախ առաջացնում են ուժասպառություն և լուրջ առողջական խնդիրներ, կարող են հանգեցնել դպրոցից հաճախակի բացակայությունների և առաջացնել ծանր ֆինանսական բեռ ընտանիքների համար՝ բուժման անհրաժեշտության պատճառով:

# Վարակների տարածման եղանակները



## Կրթական հետևանքներ

WASH-ի պայմանների բացակայությունը ուսումնական հաստատություններում կարող է ունենալ զգալի ազդեցություն կրթական միջավայրի և երեխաների առաջադիմության վրա:

**Հաճախակի բացակայություն:** Հիգիենիկ և սանիտարական պայմանների բացակայության պատճառով կարող է նվազել դպրոցական հաճախելիությունը: Սա հատկապես վերաբերում է աղջիկներին, քանի որ հատկապես դաշտանային հիգիենայի համար նախատեսված հարմարությունների բացակայության պատճառով ստիպված են լինում բացակայել դասերից, ինչը հանգեցնում է ուսումնական առաջադիմության վատթարացման:

**Ուսումնական առաջադիմության անկում:** Մաքուր ջրի և հիգիենիկ պայմանների բացակայությունը, ինչպես նաև ջրով փոխանցվող հիվանդությունների տարածումը բացասական ազդեցություն են թողնում երեխաների առողջության վրա, ինչն էլ հանգեցնում է ընդհանուր առաջադիմության անկման:

**Կենտրոնացման և ինքնազգացողության դժվարություններ:** Անբավարար հիգիենիկ պայմանները հանգեցնում են ոչ միայն հիվանդությունների, այլև հոգեբանական անհարմարությունների, որոնց պատճառով աշակերտները չեն կարողանում դասերի ժամանակ լիարժեք կենտրոնանալ և իրենց հարմարավետ զգալ:

Սա սահմանափակում է նրանց անձնական կարողությունների և սոցիալական հմտությունների զարգացման հնարավորությունները:

**Երկարաժամկետ կրթական նպատակների անհասանելիություն:** Հիգիենիկ պայմանների պակասը կարող է հանգեցնել դպրոցականների տևական բացակայությունների, ինչի հետևանքով երեխաները հաճախ ընդհատում են կրթությունը կամ դանդաղում իրենց ուսումնական նպատակներին հասնելու մեջ:

Այսպիսով՝ WASH-ի պայմանների բարելավումը կարևոր է ոչ միայն երեխաների առողջության, այլև նրանց կրթական առաջընթացի և սոցիալական զարգացման համար:

## Սոցիալական և համայնքային հետևանքներ

Ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների բացակայությունը զգալի ազդեցություն է թողնում նաև համայնքների վրա՝ սոցիալական և առողջապահական հետևանքներով:

**Անբարենպաստ միջավայր:** Աղբահանության և ջրահեռացման համակարգերի բացակայությունը համայնքներում հանգեցնում է կեղտոտ և վտանգավոր պայմանների, որոնք վնաս են հասցնում բնակչության առողջությանն ու կյանքի որակին:

**Համաճարակների վտանգ:** Ջրահեռացման համակարգերի բացակայությունը նպաստում է կեղտաջրերի կուտակմանը, որը հանգեցնում է մոծակների և այլ միջատների միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների տարածմանը:

**Բնակչության պասիվություն:** Շատ համայնքներում, գիտելիքի և կազմակերպվածության պակասի պատճառով, բնակչությունը WASH-ի պայմանների ապահովման նախաձեռնություններում հաճախ ցուցաբերում է պասիվություն, որը դժվարացնում է ջրի և հիգիենիկ պայմանների բարելավման ջանքերը:

Այս խնդիրները լուծելու համար անհրաժեշտ են համայնքի անդամների և կրթական ու առողջապահական կառույցների համատեղ գործողություններ՝ համայնքի կենսակերպը և առողջությունը բարելավելու համար:



«WASH-ի պայմանների բացակայության անցանկալի հետևանքները»  
թեման ամփոփելու համար անցնել հղումով և միացնել առցանց  
թեստ-մրցույթը. <https://bit.ly/թեստմրցույթ>

# 4. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

## Խմելու ջրի անվտանգության կարևորությունը

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ուսումնասիրությունների՝ խմելու ջուրն անվտանգ է որակվում դրանում վարակների և վնասակար նյութերի բացակայության դեպքում, ինչը խիստ կարևոր է հատկապես երեխաների առողջության պահպանման համար: Դպրոցներում մաքուր ջրի հասանելիությունը նպաստում է երեխաների ընդհանուր առողջական վիճակի բարելավմանը և նվազեցնում վարակիչ հիվանդությունների, օրինակ՝ փորլուծության և աղիքային այլ վարակների տարածումը:

## Ջրի ստուգման և ֆիլտրման մեթոդներ

Ջրի որակի ստուգման համար կարող են կիրառվել հետևյալ մեթոդները:

💧 **Մանրէաբանական ստուգումներ՝** ջրում վարակիչ մանրէների (օր.՝ աղիքային կոլիֆորմ մանրէների) առկայությունը որոշելու համար:

💧 **Քիմիական վերլուծություն՝** ջրում ծանր մետաղների, ազոտական աղերի և պեստիցիդների մակարդակը որոշելու համար:

**Ջաշվարկված ջերմակայուն կոլիֆագների փորձաքննություն**՝ խմելու ջրում վիրուսների հնարավոր առկայության նախանշանները հայտնաբերելու համար:

Այս գործընթացների կիրառման համար հարմար են հետևյալ գործիքները:



$\text{NH}_3$   
թեստ-շերտեր



$\text{N}_2\text{S}$   
թեստ-շերտեր

**Ծծմբաջրածնի ( $\text{H}_2\text{S}$ ) թեստ-շերտեր:** Չեշտ կիրառման համար նախատեսված ստուգիչ թեստ-շերտեր, որոնք պարզում են ջրի մանրէաբանական աղտոտվածության աստիճանը:

**Նիտրիտների և նիտրատների թեստ-շերտեր:** Սրանք թույլ են տալիս առանց լաբորատոր երկար հետազոտությունների արագորեն տեղում որոշել ջրում ազոտային միացությունների առկայությունը:

**Ամոնիակի հայտնաբերման թեստ-շերտեր:** Օգտագործվում են ստուգելու համար ջրում ամոնիակի մակարդակը, որը կարող է վկայել ջրի՝ կոյուղաջրերով կամ օրգանական նյութերով աղտոտման մասին:

**Թորման համակարգեր կամ մեխանիկական ֆիլտրման սարքավորումներ:** Օգտագործվում են ծանր մետաղների և այլ վնասակար նյութերի հայտնաբերման համար:

## Ջրի խնայողություն և արդյունավետ օգտագործում

Ջրի խնայողությունը կարևոր նշանակություն ունի ինչպես անհատական, այնպես էլ համայնքային մակարդակներում: Օրինակ, եթե յուրաքանչյուր մարդ օրական խնայի 10 լ ջուր, ապա 1000 բնակչությամբ համայնքում դա կկազմի 10 000 լ կամ 10 խմ ջուր: Այս քանակությունը կարող է բավարարել մոտ 50 մարդու օրական ջրի պահանջը, եթե հաշվի առնենք, որ մեկ անձն օրական սպառում է միջինում 200 լ ջուր: Այսպիսով ջրի խնայողության միջոցառումները կարող են զգալիորեն նպաստել համայնքների ջրամատակարարման բարելավմանը:

## Ինչպես ջուրը խնայել տանը

Ներկայացնում ենք մի քանի պարզ մոտեցում, որ կարող եք կիրառել տանն ու խնայել ջուրը՝ բնության ամենաթանկ ռեսուրսներից մեկը:



### ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՋՐԻ ՄԱՔՐՈՒՄ

Եթե կա կասկած, որ ջուրն աղտոտված է, տնային պայմաններում կարելի է կիրառել ջրամաքրման պարզ և արդյունավետ միջոցներ՝ առողջության համար անվտանգ ջուր ունենալու համար:

## **Ջուրը եռացնել**

Ջուրը եռացնել 3-5 րոպե: Թողնել, որ սառչի մինչև սենյակային ջերմաստիճան: Ջուրը եռացնելը սպանում է մանրէները, վիրուսները և շատ մակաբույծներ:

## **Ջուրը մաքրել գտիչներով**

Կարելի է օգտագործել խանութից գնված ջրի գտիչներ (ֆիլտր)՝ մանրէները, ծանր մետաղները կամ այլ աղտոտիչներ հեռացնելու համար: Ընտրեք գտիչ, որը համապատասխանում է ձեր ջրի որակի խնդիրներին: Տրված հղումով\* կարող եք դիտել կերամիկական գտիչների կիրառումը:



\* [youtube.com](https://www.youtube.com)

**UNICEF PNG (2023)\_Ceramic Water Filter potential in Papua New Guinea**

## **Ջուրը քլորացնել**

1 լ ջրին ավելացնել 5-6% քլոր պարունակող և մաքուր նատրիումի հիպոքլորիտի (տնային սպիտակեցնող միջոցի) 2-4 կաթիլ և սպասել 30 րոպե, մինչև այն կսպանի մանրէները և վիրուսները: Այս տարբերակը հարմար է փոքր ծավալների համար:

## **Կատարել արևային մաքրում**

Ջուրն այս տարբերակով մանրէազերծելու համար անհրաժեշտ է թափանցիկ ու մաքուր պլաստիկ շշերի մեջ լցնել ջուր և թողնել արևի ուղիղ ճառագայթների տակ 6-8 ժամ: Ուլտրամանուշակագույն ճառագայթները վնասում են մանրէների ԴՆԹ-ն և դարձնում ջուրը խմելու համար անվտանգ:

Միշտ պահեք մաքրված ջուրը փակ տարաներում, որպեսզի կանխեք կրկնակի աղտոտումը: Եթե հնարավոր է, պարբերաբար ստուգեք ջրի որակը լաբորատոր պայմաններում կամ արագ արձագանքման թեստ-շերտերով:



### **Խնայել տաք ջուրը**

Ցնցուղ ընդունելիս մարդն օգտագործվելիք ջրի ավելի քան 10%-ը ծախսում է ջրի տաքանալուն սպասելու ընթացքում: Այդ հավելյալ ջուրը դույլի մեջ հավաքելը կնվազեցնի ջրի վատնումը: Հավաքված ջուրը կարող եք օգտագործել բույսերը ջրելու, հատակը լվանալու կամ զուգարանակոնքի մեջ լցնելու համար:

Եթե դույլ օգտագործելը հարմար չէ, մտածեք տաք ջրամատակարարման համակարգ տեղադրելու մասին:

### **Հոսող ավելորդ ջրով լցնել թասը՝ մթերքը լվանալու համար**

Միրգն ու բանջարեղենը լվանալիս ծորակը փակե՛ք: Բաց ծորակը յուրաքանչյուր ընթացքում մղում է 6-12 լ ջուր: Մթերքը լվացե՛ք լվացարանի կամ թասի մեջ հավաքված ջրով, որն այնուհետև կարող եք օգտագործել այգին ջրելու համար:

Եվս մեկ հուշում. քացախը մրգերի և բանջարեղենի վրայի վնասակար պարարտանյութերը հեռացնելու ևս մեկ բնական միջոց է:





## **Խաշած մակարոնի ջուրն օգտագործել բույսերը պարարտացնելու և մազերը լվանալու համար**

Եփված մակարոնի ջուրը կարող էք ձեր տանը և շրջակայքում օգտագործել զանազան նպատակներով: Այն հարուստ է հանքանյութերով և կօզնի, որ բույսերն ավելի արագ աճեն. պարզապես ուշադիր եղեք, որ ջուրն աղի չլինի, որպեսզի չջրագրկվի բույսերի հողը: Մակարոնեղենի ջուրը կարող էք օգտագործել նաև պիցցայի և հացի խմոր պատրաստելու, ընդեղեն թրջելու, բանջարեղեն խաշելու, սպասք լվանալու և ձեր մազերը սնուցելու համար:

## **Ատամները խոզանակելիս փակել ծորակը**

Ատամներն օրական 2 անգամ 2 րոպե տևողությամբ խոզանակելիս ծորակը փակելով կարող էք օրական մոտ 20 լ ջուր խնայել: Դա տարեկան կկազմի մոտ 7300 լ:





## **Թեյնիկի մեջ եռացնել այնքան ջուր, որքան հարկավոր է**

Նախքան թեյնիկը լցնելը հաշվարկեք, թե որքան ջուր է հարկավոր: Այդպիսով դուք կխնայեք ժամանակ, էլեկտրա-էներգիա կամ գազ և ավելի քիչ ջուր կծախսեք: Եթե թեյնիկում այնուամենայնիվ ավելցուկային ջուր մնա, օգտագործեք բույսերը ջրելու համար: Թեյնիկի մեջ պահանջվածից ավելի ջուր լցնելը էներգիայի և գումարի վատնում է:



«Խմելու ջրի հասանելիություն և անվտանգ օգտագործում» թեման ամփոփելու համար ստորև բերված հղումը կամ QR կոդը տրամադրել աշակերտներին.

<https://bit.ly/խմելուջրիհասանելիություն>



# 5. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԻՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ներառական և տարիքին համապատասխանող սանիտարական ենթակառուցվածքներ

Բոլոր երեխաների, ներառյալ հաշմանդամություն ունեցողների համար սանհանգույցները պետք է մատչելի լինեն: Ուստի դրանք պետք է հարմարեցված լինեն երեխաների տարիքային առանձնահատկություններին: Դրանք պետք է ներառեն՝

- ▶ լայն դռներ և անխոչընդոտ մուտքեր,
- ▶ հարմար լվացարաններ և զուգարաններ,
- ▶ օժանդակիչ բռնակներ և այլ հարմարանքներ:

## Սանիտարական հարմարությունների ճիշտ օգտագործում

Տրամադրել ուղեցույցներ և կրթական նյութեր երեխաներին՝ սանհանգույցների ճիշտ և հիգիենիկ օգտագործման վերաբերյալ:


- ▶ Սովորեցնել ծորակների և սանիտարական հարմարանքների ճիշտ օգտագործման կանոնները:

Սովորեցնել դպրոցում և տանը սեփական մաքրությանը հետևելու և խնամքի նույնիսկ տարրական հմտություններ:

### **Ուշադրություն աղջիկների դաշտանային հիգիենային**

Հատուկ ուշադրություն դարձնել դաշտանային շրջանում աղջիկների հիգիենայի պայմաններին:

- Սպասել անհատական հիգիենիկ պարագաներ:
- Կազմակերպել դաշտանային հիգիենայի վերաբերյալ դասընթացներ աղջիկների և դպրոցական անձնակազմի համար:
- Ստեղծել դաշտանային հիգիենայի համար հարմարեցված առանձին սանհանգույցային պայմաններ



# 6. ՀԻԳԻԵՆԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՅՈՒՄ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

## 6.1 Անձնական հիգիենայի դասեր

Անձնական հիգիենայի դասերը կարելի է մատուցել տարբեր առարկաների շրջանակում կամ այն ուսուցիչների կողմից, ովքեր ունեն համապատասխան ոլորտային գիտելիքներ: Ստորև ներկայացնում ենք որոշ առաջարկներ:

### Նախադպրոցական և տարրական կրթություն

Սերեխաներին կարելի է սովորեցնել պարզ օրինակներով՝ օգտագործելով խաղեր, պատմություններ և երգեր:

### Կենսաբանություն

Ուսուցիչները կարող են դասեր մատուցել հիգիենայի հիմնական կանոնների, միկրոօրգանիզմների և հիվանդությունների կանխարգելման մեխանիզմների վերաբերյալ:

Կարելի է ներկայացնել նաև ձեռքերի ճիշտ լվացման կարևորությունը՝ նկարագրելով մաշկի վրա առկա մանրէները:

## **Քիմիա**

Կարելի է քննարկել հիգիենիկ նյութերի (օճառ, մաքրող միջոցներ) բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը:

Քիմիական ռեակցիաների օրինակներով կարելի է բացատրել, թե ինչպես են հիգիենիկ նյութերը վնասազերծում մանրէները՝ ապահովելով մաքրություն և անվտանգություն:

## **Առողջ ապրելակերպ**

Առողջ ապրելակերպի ուսուցիչները կարող են բացատրել անձնական հիգիենայի կարևորությունը առողջության պահպանման գործում:

Կարող են սովորեցնել նաև ճիշտ սննդակարգի և ատամների խնամքի կանոնները:

## **Ֆիզկուլտուրա**

Կարելի է ընդգրկել ֆիզիկական ակտիվության և հիգիենայի կապի մասին քննարկումներ:

Կարելի է սովորեցնել ֆիզիկական ակտիվության ընթացքում հիգիենայի պահպանման (օրինակ՝ քրտինքի մաքրման, մարզահագուստի մաքրության) անհրաժեշտության մասին:

## **Հասարակագիտություն**

Կարելի է կազմակերպել համայնքային և հասարակական հիգիենայի կարևորության մասին քննարկումներ՝ ներկայացնելով հիգիենայի ազդեցությունը համայնքի առողջության վրա:

## Դասղեկներ

Դասղեկը կարող է կազմակերպել հիգիենայի թեմայով քննարկումներ դասղեկական ժամերի ընթացքում:

Կարելի է ընդգրկել տեսանյութեր կամ հրավիրել մասնագետներ՝ հիգիենայի վերաբերյալ թեմատիկ զրույցներով և քննարկումներով:

## Բժիշկներ և բուժքույրեր (եթե առկա են)

Դպրոցական բժիշկներն ու բուժքույրերը կարող են անցկացնել հատուկ դասընթացներ հիգիենայի, հիվանդությունների կանխարգելման և առաջին օգնության վերաբերյալ:

## Ոլորտային միավորում

Անձնական հիգիենայի դասընթացները կարող են մատուցվել առարկաների փոխկապակցման միջոցով:

Կենսաբանության, հասարակագիտության և առողջ ապրելակերպի ուսուցիչների համագործակցությամբ կարելի է կազմել ներմիավորված (ինտեգրված) ծրագրեր:

Ֆիզկուլտուրայի դասերում կարելի է ներառել առողջ ապրելակերպի և հիգիենայի պահպանման հմտությունների ուսուցում:

Այսպես հնարավոր է դասընթացները դարձնել համապարփակ և արդյունավետ՝ ընդգրկելով բոլոր տարիքային խմբերի երեխաներին:

## 6.1.1. Ձեռքերի ճիշտ լվացման ուսուցում

### Ցուցադրական գործնական դասեր

Դպրոցում հաճախ անցկացրեք գործնական դասեր ձեռքերի լվացման ցուցադրական կիրառումներով:

Օգտագործեք վառ գույներով պաստառներ և տեսանյութեր:

1. Ձեռքերդ թրջիր ջրով:
2. Օճառի ձեռքերիդ ամբողջ մակերևույթը:
3. Ձեռքերիդ ափերը միմյանց շփիր:
4. Մի ձեռքի վերևի մասը տրորի մյուս ձեռքի ափով ու մատներն իրար մեջ ագուցելով:
5. Ձեռքերի ափերն իրար շփիր՝ մատներն իրար մեջ ագուցելով:
6. Ձեռքերն իրար մեջ ագուցելով՝ մի ձեռքի եղունգների երեսով տրորի մյուսի ափը:
7. Տրորի մի ձեռքի բթամատը՝ մյուս ձեռքով այն բռնելով ու պտտեցնելով:
8. Մի ձեռքի եղունգների ծայրերով շրջանաձև տրորի մյուս ձեռքի ափը:
9. Տրորի մի ձեռքի դաստակը մյուս ձեռքով:
10. Ջրով լավ ցայիր ձեռքերդ:
11. Ձեռքերդ չորացրու միանգամյա անձեռոցիկով:
12. Ծորակը փակիր արմունկով կամ օգտագործելով անձեռոցիկ:



Մրցույթ կազմակերպեք, որտեղ երեխաները միավոր կստանան յուրաքանչյուր ճիշտ կատարված քայլի համար:

### Խաղեր և զվարճանքներ

Օգտագործեք գունավոր ներկեր՝ ցույց տալու համար, թե ինչպես է կեղտը մնում ձեռքերին և լվացվում օճառով:

### Գործնական հմտությունների ստուգում

Երեխաներին տրամադրեք անհատական հիգիենայի աղյուսակով քարտեր՝ իրենց ձեռքերի լվացման հաճախականությունը գրանցելու համար:

## Ձեռքերի լվացման հիգիենայի աղյուսակ

ԿՄՍՎԻՎ	Չափարվա օրը	Լվացման ժամը և դատճառը*								
	<b>ԵՐԿՈՒՅՎԲԻ</b>									
	<b>ԵՐԵՔՅՎԲԻ</b>									
	<b>ՉՈՐԵՔՅՎԲԻ</b>									
	<b>ՀԻՆԳՅՎԲԻ</b>									
	<b>ՈՒՐԲՎՐ</b>									
	<b>ՅՎԲՎՐ</b>									
	<b>ԿԻՐՎԿԻ</b>									

\* Օրինակ՝ 15:30/զուգարանից հետո:

Պատճառի այլ օրինակներ՝ ուտելուց առաջ և հետո, աղբը թափելուց հետո, կենդանիներին հպվելուց հետո, երբ երևում է, որ ձեռքերը կեղտոտ են, քիթը մաքրելուց, փոշտալուց կամ հազալուց հետո...

## 6.1.2. Ատամների խնամքի ուսուցում


### Տեսողական ցուցադրություններ


Ռպրոցում ներգրավեք տեղական ատամնաբույժների, որոնք կցուցադրեն ատամների ճիշտ խոզանակման ձևը:

### Փոքրիկ գործնական ծրագրեր

Յուրաքանչյուր երեխա թող բերի իր խոզանակը և մածուկը:

Ստեղծեք գրաֆիկ՝ հիշեցնելու համար ատամների խնամքի ճիշտ ժամանակացույցը:





## Ինչպես խոզանակել ատամները

- Դիր ոլոռի չափով մածուկ:
- Շրջանաձև խոզանակիր ատամների արտաքին մասը:
- Վերովար շարժմամբ խոզանակիր ատամների արտաքին մասը:
- Վերովար շարժմամբ խոզանակիր ատամների ներսի մասը:
- Խոզանակիր ատամների երեսի մասը:
- Վերովար շարժմամբ խոզանակիր լեզուդ:
- Մածուկը դուրս թքիր և բերանդ ողողիր:

## Ատամների լվացման հիգիենայի աղյուսակ

ՎՄԱՍՐԻՎ	Նշել օրվա որ ժամին/դատճառով*	ՎՈՎՎՈՏՅՎՆ	ԵՐԵԿՈՅՎՆ
	<b>ԵՐԿՈՒՅՎԲԻ</b>		
	<b>ԵՐԵՔՅՎԲԻ</b>		
	<b>ՋՈՐԵՔՅՎԲԻ</b>		
	<b>ՀԻՆԳՅՎԲԻ</b>		
	<b>ՈՒՐԲՍԲ</b>		
	<b>ՇՎԲՍԲ</b>		
	<b>ԿԻՐՎԿԻ</b>		

## 6.2. Համայնքային հիգիենա և հանրային գիտակցություն

### Հանրային իրազեկում և կրթություն

#### Իրազեկման արշավներ

Հանրային գիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով կարելի է կազմակերպել հանրային արշավներ համայնքում՝ պարզ և ազդեցիկ կարգախոսներով, օրինակ՝

- 💧 Մաքուր միջավայր՝ առողջ ապագա.
- 💧 Համայնքի հիգիենան մեր ընդհանուր պատասխանատվությունն է.
- 💧 Աղբի տեղը աղբամանն է:

#### Իրազեկում դպրոցականների միջոցով

💧 Դպրոցներում անցկացնել հատուկ կրթական միջոցառումներ համայնքային հիգիենայի վերաբերյալ:

💧 Աշակերտներին դարձնել «հիգիենայի դեսպաններ»՝ իրենց ընտանիքներին և համայնքին ճիշտ ուղիներ սովորեցնելու համար:

#### Կազմակերպել խաղեր և մրցույթներ, օրինակ՝

- 💧 «Աղբի տեսակավորման վարպետ» խաղ,
- 💧 «Մաքուր համայնք» նկարչական մրցույթ,
- 💧 դպրոցներում «Լավագույն հիգիենայի արշավ»:

## **Ճահադրդիչ նախաձեռնություններ**

💧 Տրամադրել հավաստագրեր կամ պարգևներ այն ընտանիքներին և համայնքային անդամներին, որոնք առավել շատ մասնակցություն են ունեցել հիգիենային նվիրված ծրագրերում:

💧 Ստեղծել օրինակելի մաքուր համայնքի նախագիծ, որի չափանիշների հետ համեմատությամբ ամեն ամիս գնահատվում են մաքրման և հիգիենայի պահպանման արդյունքները:

## **6.3. Հիգիենայի իրազեկման միջոցառումներ**

**Դերախաղեր երեխաների համար:** Կազմակերպեք դերախաղեր, որտեղ ավելի բարձր դասարանների աշակերտները ներկայացնում են հիգիենիկ քայլերի կարևորությունը կրտսեր ընկերներին: Օրինակ՝

💧 Ինչպես են չլվացված ձեռքերը հիվանդություն առաջացնում:

💧 Սանիտարական պայմանների պահպանման հերոսները:

**Փոխգործուն ներկայացումներ:** Օգտագործեք տեսողական և լսողական նյութեր՝ պատմություններն ավելի գրավիչ դարձնելու համար, և հարցուպատասխան հանդիսատեսի ներգրավվածությունը մեծացնելու համար:

## **Հանդիպումներ ծնողների հետ**

💧 **Բաց դասեր և զրույցներ:** Կազմակերպեք բաց դասեր, որտեղ ուսուցիչները և բժիշկները կպատմեն հիգիենայի կարևորության մասին՝ տալով պարզ և ազդեցիկ խորհուրդներ:

**Փորձի փոխանակում:** Ներգրավեք ծնողներին քննարկումների մեջ՝ առաջարկելով ներկայացնել իրենց փորձն ու հարցերը:

**Տնային հիգիենայի ուղեցույց:** Տրամադրեք տպագիր կամ էլեկտրոնային նյութեր՝ ընտանիքում հիգիենայի պահպանման վերաբերյալ: Տարբեր տնային հանձնարարությունների միջոցով ներգրավեք աշակերտների ընտանիքներին հիգիենային նվիրված նախաձեռնություններում:

## Հատուկ միջոցառումներ՝ միջազգային օրերի շրջանակում

**Համաժողովներ և վեբինարներ:** Կազմակերպեք միջոցառումներ՝ նշելու Ջրի համաշխարհային օրը (մարտի 22) կամ Ձեռքերի լվացման համաշխարհային օրը (հոկտեմբերի 15) կամ էլ թեմայով համընկող այլ օր:

Հրավիրեք բժիշկներ, ուսուցիչներ և համայնքի ակտիվիստներ՝ քննարկելու հիգիենայի պահպանման մարտահրավերներն ու լուծումները:

### Թեմատիկ մրցույթներ

Կազմակերպել «Մաքուր ձեռքեր» նկարչական մրցույթ

Դպրոցներում կազմակերպել հիգիենայի մասին գիտելիքների ստուգման խաղեր

### Հանրային ցուցադրություններ

Համայնքի տարբեր վայրերում ներկայացնել տեղեկատվական պաստառներ, տեսա-նյութեր և մոդելներ

# 7. ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՐԱՅԵՌԱՅՈՒՄ

## Աղբահանության և թափոնների կառավարման կարևորությունը

Աղբահանության և կոյուղային համակարգերի ճիշտ կազմակերպումը ոչ միայն ապահովում է դպրոցների մաքուր և հիգիենիկ միջավայրը, այլև նպաստում բնական ռեսուրսների պահպանությանը՝ վերամշակման միջոցով: Վատ կազմակերպված աղբահանությունը կարող է լրջորեն վնասել ինչպես առողջությանը, այնպես էլ շրջակա միջավայրին:

## Դպրոցներում և համայնքներում աղբահանության համակարգի բարելավում



### Տեսակավորման համակարգի ներդրում

Դպրոցներում տեղադրել տարբեր աղբամաններ՝ պլաստիկի, թղթի, օրգանական թափոնների և այլ նյութերի տեսակավորման համար:

Կազմակերպել տեղեկատվական միջոցառումներ և գործնական դասընթացներ՝ տեսակավորման կանոնների վերաբերյալ:

## Վերամշակման կազմակերպությունների ներգրավում

Համագործակցել տեղական վերամշակող ընկերությունների հետ՝ տեսակավորված աղբը հետագա վերամշակման ենթարկելու համար:

Ստեղծել համաձայնագրեր վերամշակման կազմակերպությունների հետ՝ թափոնների անվտանգ և արդյունավետ վերամշակումը երաշխավորելու համար:



## Աղբի նվազեցման արշավներ

«Ավելի քիչ թափոն» նախաձեռնության շրջանակում խրախուսել ավելի քիչ թափոն արտադրող վարքագիծ:

Կազմակերպել արշավներ՝ մեծացնելու հանրային իրազեկվածությունը վերամշակման կարևորության մասին:

## Կոյուղային համակարգերի բարելավում

Եթե համայնքում կոյուղային համակարգ չկա և այն կառուցելը տեխնիկապես կամ ֆինանսապես անհնար է, կարելի է կիրառել այլընտրանքային լուծումներ, որոնք հարմար են ցածր ռեսուրսային միջավայրերում: Ստորև ներկայացնում ենք միջազգային փորձի վրա հիմնված մի քանի առաջարկ:



## **Անհատական կամ խմբային սեպտիկ համակարգեր**

Առաջարկել համայնքին կամ դպրոցին տեղադրել սեպտիկ բաքեր՝ թափոնների անվտանգ և երկարաժամկետ կառավարման համար: Ընտրել բակտերային ֆիլտրացիա ունեցող բաքեր, որոնք նվազեցնում են հողային և ջրային աղտոտվածությունը:

## **Կենսաբանական զուգարաններ (Էկոզուգարաններ)**

Էկոզուգարանները թափոնները վերածում են պարարտանյութի՝ առանց ջրի մատակարարման անհրաժեշտության: Սրանք հեշտությամբ տեղադրվում են գյուղական վայրերում և չեն պահանջում մեծ ֆինանսական ներդրում: Կարելի է համայնքներում կազմակերպել սեմինարներ՝ սովորեցնելու, թե ինչպես ճիշտ օգտագործել և պահպանել այդ զուգարանները:

## **Վակուումային կամ չոր զուգարաններ**

Սրանք չեն պահանջում ջրի մատակարարում կամ կենտրոնացված կոյուղու համակարգ: Թափոնները կուտակվում են փակ տարաներում և պարբերաբար հեռացվում են: Կարելի է ստեղծել թափոնների հավաքման պարբերական համակարգ՝ համայնքային պատասխանատուների ներգրավմամբ:

## **Թափոնների հավաքում և հեռացում, շարժական համակարգեր**

Կան շարժական զուգարաններ, որոնք պարբերաբար մաքրվում են մասնագիտացված ընկերությունների կամ համայնքային խմբերի կողմից: Կարելի է համագործակցել տեղական ընկերությունների հետ՝ թափոնների հավաքման համար:

## Ֆիլտրման համակարգերի ներդրում

Կազմակերպել փոքր ֆիլտրացիոն ավազանների կամ կենսազագային համակարգերի տեղադրում, որոնք կօգնեն վերամշակելու թափոնները՝ նվազեցնելով առողջապահական ռիսկերը: Հատուկ սարքերով հնարավոր է ջրազրկել հեղուկ թափոնները և ապահովել դրանց անվտանգ պահպանումը:

Այս լուծումները ոչ միայն տեխնիկապես իրագործելի են, այլև մատչելի և երկարաժամկետ: Դրանք կարող են բարելավել կյանքի որակը՝ ապահովելով առողջապահական և բնապահպանական կայունություն:

## Թափոնների վերամշակման կարևորությունը

Ուսուցանել թափոնների վերամշակման կարևորությունն ու գործընթացները՝ դպրոցական ծրագրերում ներառելով համապատասխան դասեր, ինչպես նաև կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծեր:

Կազմակերպել վերամշակման ցուցադրական միջոցառումներ և այցելություններ վերամշակման գործարաններ:





## Համագործակցություն տեղական ընկերությունների հետ

Կազմակերպել դպրոցներից և համայնքներից աղբի տեսակավորված հավաքման գործընթաց՝ վերամշակման նպատակով:

Գտնել վերամշակման կազմակերպություններ, որոնք կկարողանան ապահովել թափոնների ճիշտ վերամշակում և անվտանգ կառավարում:



Խմելու ջրի անվտանգ օգտագործման, ինչպես նաև սանիտարիայի և հիգիենայի կիրառությունների վերաբերյալ թեմաներն ամփոփելու համար անցնել հղումով և միացնել առցանց թեստ-մրցույթը.

<https://bit.ly/թեստմրցույթ2>



# 8. WASH-ի ԴԵՐԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայաստանում WASH-ին առնչվող իրավական կարգավորումները ներառում են մի շարք օրենքներ, որոնք նախատեսված են ջրի որակի, սանիտարական պայմանների և հանրային առողջության պահպանման համար:

**«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը»** սահմանում է ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման ու պահպանման հիմնական կարգավորումները՝ նպատակ ունենալով ապահովելու ջրի արդյունավետ օգտագործումը, պահպանությունը և մատչելիությունը հանրային առողջության պահպանման համար: Օրենսգիրքը ներառում է հետևյալ հիմնական հասկացությունները և սկզբունքները.

**Սազգային ջրային պաշարներ՝** ջրային ռեսուրսների որակի և քանակի այնպիսի պահպանություն, որը բավարարում է հանրության ներկայիս և ապագա կարիքները.

**Օգտագործելի ջրային ռեսուրսներ՝** այն ջրային ռեսուրսների մասերը, որոնք կարող են օգտագործվել առանց սազգային ջրային պաշարը նվազեցնելու.

**Ջրային համակարգեր՝** կառույցներ և սարքավորումներ, որոնք ապահովում են ջրի հոսքի կառավարման, տեղափոխման և մաքրման գործընթացները.

**Հասարակական շահ՝** ջրային ռեսուրսների շահագործման ոլորտում գործողություններ, որոնք օգնում են հանրությանը:

Օրենսգիրքն ապահովում է, որ ջրային ռեսուրսների օգտագործումն ու կառավարումը կատարվեն ջրի որակի պահպանման և աղտոտման կանխարգելման համար անհրաժեշտ պայմաններով:

## **Խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի որակի հիգիենիկ պահանջներ**

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հաստատած «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» (N 2-III-Ա2-1) սանիտարական նորմերը և կանոնները նպատակ ունեն ապահովելու, որ խմելու ջրի որակը բավարարի հանրային առողջապահության պահանջները: Սանիտարական նորմերը կիրառվում են այն բոլոր կառույցների, ջրամատակարարման համակարգերի և կազմակերպությունների նկատմամբ, որոնք զբաղվում են խմելու ջրի մատակարարմամբ և վերահսկմամբ: Այս նորմերը ներառում են՝

**💧 հիգիենիկ պահանջներ.** խմելու ջուրը պետք է լինի անվտանգ և չունենա վնասակար քիմիական կամ կենսաբանական նյութեր.

**💧 որակի հսկողություն.** խմելու ջրի որակի վերահսկումն ապահովվում է ջրամատակարարման համակարգերի շահագործումն իրականացնող կազմակերպությունների և պետական սանիտարական վերահսկողության միջոցով.

**💧 սանիտարական կանոններ.** խմելու ջրի որակը պետք է համապատասխանի հիգիենիկ նորմերին և լինի առանց տեսանելի օրգանիզմների:

Այս փաստաթուղթը սահմանում է, որ խմելու ջրի որակը պետք է ապահովվի ինչպես հանրային օգտագործման համար, այնպես էլ արտադրական և սննդի արտադրության նպատակներով:

### **«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք**

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի կարգավորումներ սահմանող այս օրենքը ուղղված է ջրի, օդի և հողի որակի պահպանմանը: Այն ապահովում է թափոնների կառավարման ստանդարտները, որոնք աջակցում են անվտանգ սանիտարական պայմանների պահպանմանը՝ շրջակա միջավայրի աղտոտումը նվազեցնելու նպատակով:

### **«Հանրային առողջապահության մասին» ՀՀ օրենք**

Օրենքը նախատեսում է հանրային առողջության պահպանման պարտադիր միջոցառումները՝ ներառյալ ջրի, սանիտարիայի և հիգիենայի պահանջները: Այն կարևոր է հանրային վայրերում (օրինակ՝ դպրոցներում) սանիտարական հարմարությունների և մաքրման կարգի սահմանման համար՝ կանխելու վարակիչ հիվանդությունների տարածումը:

### **«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք**

Թեև այս օրենքը հիմնականում ուղղված է սննդի անվտանգությանը, սակայն կարևոր է սննդի պատրաստման և պահպանման հիգիենիկ պայմանների ապահովման համար: Այն ներառում է նաև խմելու ջրի որակի ստանդարտները, որոնք կարևոր են դպրոցներում և կրթական հաստատություններում երեխաների առողջության պահպանման համար:

Այս օրենքների միացյալ կիրառումը նպաստում է WASH-ի խնդիրների լուծմանը՝ ապահովելով անվտանգ և առողջ դպրոցական միջավայր: UNICEF-ի վերլուծությունների համաձայն՝ այս օրենսդրական հիմքերը կարևոր են երեխաների առողջության վրա դրական ազդեցություն ունենալու և դպրոցներում ավելի բարձր չափանիշներ սահմանելու համար:

**«Կայուն զարգացման 6-րդ նպատակին հասնելու՝ 2021-2030 թվականների ռազմավարությունը, գործողությունների ծրագիրը, կայուն զարգացման 6-րդ նպատակի թիրախներին հասնելու 2021-2030 թվականների ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացմանն օժանդակող կարիքների գնահատման և կարողությունների զարգացման ծրագրերը հաստատելու մասին»  
ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

Նախագիծը նպատակ ունի բարելավելու խմելու ջրի մատակարարման համակարգի հիգիենիկ նորմերը և կանոնները Հայաստանում, սահմանելու խմելու ջրի որակի պահանջները և ամրապնդելու ջրի ֆիզիկական, մանրէաբանական ու քիմիական ցուցանիշների վերահսկման գործընթացները՝ հանրային առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանության համար:

## 9. ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուղեցույցը մշակվել է հաջակություն Չայաստանի կրթական հաստատություններին՝ երեխաների համար առողջ, անվտանգ, ներառական ու արժանապատիվ միջավայր ստեղծելու գործում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի ուսումնասիրություններն ընդգծում են, որ դպրոցներում առկա ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների հետ կապված խնդիրներն ազդում են երեխաների առողջության, դպրոցական հաճախելիության և համայնքի ընդհանուր բարեկեցության վրա:

Այս ուղեցույցը օգտակար գործիք է՝ դպրոցներին և համայնքներին տրամադրելու գործնական խորհուրդներ՝ WASH-ի պայմանների բարելավման և կայուն լուծումների համար: Վերջիններիս հիմնական նպատակներն են՝

**Ջրամուկի ջրի հասանելիությունը՝** դպրոցներում անվտանգ և շարունակական ջրամատակարարում ապահովելը,

**սանիտարական ենթակառուցվածքների զարգացումը՝** ներառական և տարիքային խմբերին համապատասխանող սանհանգույցներ կառուցելու միջոցով,

**հիգիենայի չափանիշների բարելավումը՝** դասավանդման և հանրային իրազեկման միջոցառումների միջոցով,

**աղբահանության և ջրահեռացման լուծումները՝** ապահովելու մաքուր և հիգիենիկ պայմաններ դպրոցներում և համայնքներում:

Ուղեցույցի կիրառումը կնպաստի երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության բարելավմանը, հիվանդությունների կանխարգելմանը և կրթական արդյունքների մակարդակի բարձրացմանը: Սա նաև հնարավորություն կտա համայնքներին դառնալու ավելի պատասխանատու և գիտակցված՝ պահպանելով հիգիենիկ միջավայր:

WASH-ի նախաձեռնությունների հաջող իրականացման արդյունքում Հայաստանը կունենա առողջ ու կրթված սերունդներ, որոնք կկարողանան լիարժեք օգտվել իրենց կրթական հնարավորություններից և կառուցել ավելի ուժեղ ու կայուն հասարակություն:

## 10. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Comprehensive Study of WASH Facilities at RA School and Preschool Educational Institutions, CIVITTA, UNICEF, summary report, July 2023.
2. <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/drinking-water>
3. <https://www.who.int/publications/i/item/9789241549950>
4. <https://www.unicef.org/armenia/պատմություններ/ինչպես-տանը-խնայել-ջուրը>
5. UN Habitat and WHO, 2021. Progress on wastewater treatment – Global status and acceleration needs for SDG indicator 6.3.1. United Nations Human Settlements Programme (UN-Habitat) and World Health Organization (WHO), Geneva.
6. Progress on household drinking water, sanitation and hygiene 2000–2022: special focus on gender. New York: United Nations Children’s Fund (UNICEF) and World Health Organization (WHO), 2023. <https://washdata.org/reports/jmp-2023-wash-households>
7. <https://www.unicef.org/water-sanitation-and-hygiene-wash>

- 8.** Progress on household drinking water, sanitation and hygiene 2000–2022: special focus on gender. New York: United Nations Children’s Fund (UNICEF) and World Health Organization (WHO), 2023. <https://washdata.org/reports/jmp-2023-wash-households>
- 9.** <https://www.susana.org/search?search=to+pit+latrine+emptying+>
- 10.** [https://www.cdc.gov/global-water-sanitation-hygiene/about/about-global-sanitation.html?CDC\\_AAref\\_Val=](https://www.cdc.gov/global-water-sanitation-hygiene/about/about-global-sanitation.html?CDC_AAref_Val=)
- 11.** <https://www.arlis.am/documentview.aspx?docid=121550>
- 12.** <https://www.arlis.am/documentview.aspx?docID=37855>
- 13.** <https://www.arlis.am/documentview.aspx?docid=72899>
- 14.** <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165083>
- 15.** <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=145840>
- 16.** <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74494>
- 17.** <https://www.e-draft.am/projects/3464/about>

# Բովանդակություն

Երկու խոսք	<b>1</b>
ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետազոտությունների արդյունքները Չայաստանում	<b>3</b>
WASH-ի պայմանների բացակայության անցանկալի հետևանքները	<b>4</b>
Խմելու ջրի հասանելիություն և անվտանգ օգտագործում	<b>10</b>
Ներառական և տարիքին համապատասխանող սանիտարական հարմարություններ	<b>17</b>
Հիգիենայի կիրառությունների ուսուցում դպրոցներում և համայնքում	<b>19</b>
Աղբահանություն և ջրահեռացում	<b>31</b>
WASH-ի դերը և ՀՀ օրենսդրական շրջանակը	<b>36</b>
Ամփոփում	<b>40</b>
Օգտագործված աղբյուրներ	<b>42</b>

